ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.05.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/105

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Լայթ էքսպերտ» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Ասծատուրյանի (պետական գրանցման համար 273.110.1167506),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.04.2021թ. թիվ 26/26-1/6118-2021 գրությամբ «Լայթ էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 19.04.2021թ. թիվ 1/18-2/22560-2021 գրության հիման վրա 22.04.2021թ. թիվ 26/26-1/6118-2021 գրությամբ նախաձեռնել է «Լայթ էքսպերտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լայթ էքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լայթ էքսպերտ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի շրջանակներում կատարված հարցման պատասխանը առ այն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից e-auction էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին 08/04/2021թ-ին ուղարկվել է հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում, չի համապատասխանում իրականությանը:

Մյուս անհամապատասխանությունը կայանում է նրանում, որ հարցման պատասխանի մեջ նշված է, թե ես էլեկտրոնային փոստիս ուղարկված ծանուցումը կարդացել եմ 28/04/2021թ-ին, մինչդեռ որևէ մեկը չի կարող իմանալ թե երբ եմ ես բացել կամ կարդացել իմ էլ. փոստին ուղարկված նամակները: Կհավելեմ, որ ես իրոք ծանուցումը կարդացել եմ 28/04/2021թ.-ին, սակայն e-auction համակարգի ներսում, այն բանից հետո երբ ստացա նամակ Տ. Գևորգյանից 27/04/2021թ-ին, որի մեջ ասվում էր, որ «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ է սկսվել:

Կից ուղարկում եմ ձեզ նաև իմ էլ. փոստի գործողությունների մատյանը, որը նայելով դուք կհամոզվեք, որ իմ էլ. փոստին 08/04/2021 որևէ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող որևէ ծանուցում չի եկել:

Եթե ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ունի փաստացի ապացույց, որ իմ էլ. փոստին որևէ ծանուցում է գնացել, կխնդրեմ այն ներկայացնել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի շրջանակներում 30.04.2021թ. ժամը 09:20-ին, 06.05.2021թ. ժամը 09:40-ին, 18.05.2021թ. ժամը 09:30-ին և 21.05.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.04.2021թ. թիվ 1/18-2/22560-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի և «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) տեխնիկական բնութագրի բոլոր չափաբաժիններում նշված հզորության, լուսաշողի ջերմաստիճանի, արտաքին և ներքին տրամագծի վերաբերյալ ցուցանիշները նշված էին միջակայքով, սակայն պետք է լիներ հստակ,
- «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված 1) և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) մեջ ընթացակարգի ծածկագիրը սխալ էր նշված,
- «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնում բազմակետ լուսարձակ/կետերի քանակը նշված էր 50, սակայն հրավերով պահանջվել էր առնվազն 90, իսկ 2-5-րդ չափաբաժիններում նշված լամպերի ներքին և արտաքին տրամագծերի չափերը չէին համապատասխանում հրավերի պահանջներին:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 08.04.2021թ-ին «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին և «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ին ծանուցվել էր շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում միայն «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն էր շտկել առկա անհամապատասխանությունները: «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից շտկում չէր կատարվել և վերջինիս հայտը մերժվել էր:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները, «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում ընթացակարգի փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի շրջանակներում 30.04.2021թ. ժամը 09:20-ին, 06.05.2021թ. ժամը 09:40-ին, 18.05.2021թ.

ժամը 09:30-ին և 21.05.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ և 42-րդ կետերը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.04.2021թ. թիվ 26/26-1/6118-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 19.04.2021թ. թիվ 1/18-2/22560-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի շրջանակներում «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացրած դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում

որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ կառավարության 6 ապրիլի 2017 թվականի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի համաձայն՝

1.Սույն կարգով կարգավորվում են էլեկտրոնային ձևով գնումների կատարման հետ կապված հարաբերությունները:

(...)

7. ***<u>Մասնակիցը, գնումներին մասնակցելիս, իրավունք ունի էլեկտրոնային եղանակով՝</u>***

1) ստանալու իրավեր.

<u>2) ստանալու ծանուցում.</u>

3) ներկայացնելու հայտ.

4) ներկայացնելու պարզաբանում ստանալու պահանջ:

8. ***<u>էլեկտրոնային գնումը ներառում է էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգի իրականացումը և ծանուցումների տրամադրումը:</u>***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

- «Լայթ Էքսպերտ»: ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված 1) և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) մեջ ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված:
- «Լայթ Էքսպերտ»: ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժնում բազմակետ լուսարձակ/կետերի քանակը նշված է 50, սակայն հրավերով պահանջվել է առնվազն 90, իսկ 2-5-րդ չափաբաժիններում նշված լամպերի ներքին և արտաքին տրամագծերի չափերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին»:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը և որոշել է առաջարկել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ և 42-րդ կետերը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերում, Կարգի 41-րդ կետի համաձայն Ընկերությանն ուղարկված ծանուցման բացակայությամբ պայմանավորված, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Պատվիրատուին պահանջ է ներկայացրել՝ տրամադրելու ծանուցման արտատպումը, մինչդեռ Պատվիրատուի կողմից չի տրամադրվել, այն պատճառաբանությամբ, որ Պատվիրատուի մոտ այն չի պահպանվել և ներկայացնելու հնարավորություն չունի:

Վերոգրյալով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 29.04.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/6643-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ տրամադրել տեղեկատվություն՝ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1. արդյո՞ք «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից e-auction էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով Ընկերությանն ուղարկվել է հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում,

2. եթե այո, ապա ի՞նչ ֆայլեր են կցվել նշված ծանուցմանը:

Ի պատասխան վերը նշված հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.05.2021թ. թիվ Ն/26-1/10099-2021 գրությամբ հայտնել է, որ Էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Լայթ Էքսպերտ ՍՊԸ-ի՝ «armeps» համակարգում գրանցած էլեկտրոնային փոստի հասցեով 08/04/2021թ. ժամը 17:47-ին ուղարկվել է էլեկտրոնային ծանուցում, որը կարդացվել է վերջինիս կողմից 28/04/2021թ. ժամը 15:13-ին:

ՀՀ ֆինանսների նախարարության 04.05.2021թ. թիվ Ն/26-1/10099-2021 գրության վերաբերյալ «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ դիրքորոշումը.

«ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի շրջանակներում կատարված հարցման պատասխանը առ այն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից e-auction էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին 08/04/2021թ-ին ուղարկվել է հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում, չի համապատասխանում իրականությանը:

Մյուս անհամապատասխանությունը կայանում է նրանում, որ հարցման պատասխանի մեջ նշված է, թե ես էլեկտրոնային փոստիս ուղարկված ծանուցումը կարդացել եմ 28/04/2021թ-ին, մինչդեռ որևէ մեկը չի կարող իմանալ թե երբ եմ ես բացել կամ կարդացել իմ էլ. փոստին ուղարկված նամակները: Կհավելեմ, որ ես իրոք ծանուցումը կարդացել եմ 28/04/2021թ.-ին, սակայն e-auction համակարգի ներսում, այն բանից հետո երբ ստացա նամակ Տ. Գևորգյանից 27/04/2021թ-ին, որի մեջ ասվում էր, որ «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ է սկսվել:

Կից ուղարկում եմ ձեզ նաև իմ էլ. փոստի գործողությունների մատյանը, որը նայելով դուք կհամոզվեք, որ իմ էլ. փոստին 08/04/2021 որևէ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող որևէ ծանուցում չի եկել»:

Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմամբ պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 12.05.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/7500-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետի համաձայն՝ Անձն ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տվյալ բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը: Սույն կարգի իմաստով բողոքարկման ընթացակարգի պարտադիր կողմեր են համարվում պատվիրատուն, բողոք և/կամ համանման բողոք ներկայացրած անձը (անձինք), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձը (անձինք)՝ եթե բողոք բերողի իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին: ՀՀ պետական վերահսկողական ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և հասարակական կազմակերպությունների՝ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ ներգրավելու՝ Անձին ներկայացված գրավոր պահանջը ենթակա է բավարարման, իսկ նշված ժամկետից հետո նման պահանջ ներկայացվելու դեպքում վերջիններիս որպես կողմ ներգրավելու կամ մերժելու հարցը որոշում է Անձը:

Գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունը Կարգի 15-րդ կետի համաձայն՝ ներգրավվել է որպես կողմ:

Կից Ձեզ է տրամադրվում սույն ընթացակարգի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության 04.05.2021թ. թիվ Ն/26-1/10099-2021 գրության վերաբերյալ «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, որի վերաբերյալ խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում հայտնել կարծիք:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի քննության շրջանակներում 18.05.2021թ. ժամը 09:30-ին հրավիրվել է նիստ:

Կից տրամադրվում է «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 08.05.2021թ. ներկայացված գրությունը»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.05.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 13.05.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/7500-2021 գրության հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանի հրամանի 15-րդ կետի ուժով ***ՀՀ ֆինանսների նախարարությունը չի կարող ներգրավվել որպես քննարկվող ընթացակարգի կողմ:***

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նշված նորմի ուժով անհրաժեշտության դեպքում, որպես ***պարտադիր կողմ կարող է ներգրավվել էլեկտրոնային աճուրդների eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ համակարգ) տեխնիկական սպասարկումն իրականացնող անձը՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն*** (էլ. փոստ՝ d.shahbazyan@itresources.am, հեռ.՝ +37444883366, հասցե՝ ք. Երևան, Երվանդ Քոչարի 23/64), եթե բողոք բերողի իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգին»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 18.05.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/7730-2021/ գրությամբ դիմել է «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«Կարգի 15-րդ կետի համաձայն՝ Անձն ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր ***կողմերի՝ տվյալ բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը: Սույն կարգի իմաստով բողոքարկման ընթացակարգի պարտադիր կողմեր են համարվում*** պատվիրատուն, բողոք և/կամ համանման բողոք ներկայացրած անձը (անձինք), ինչպես նաև ***էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձը (անձինք)՝ եթե բողոք բերողի իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին:*** ՀՀ պետական վերահսկողական ծառայության, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և հասարակական կազմակերպությունների՝ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում տվյալ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ ներգրավելու՝ Անձին ներկայացված գրավոր պահանջը ենթակա է բավարարման, իսկ նշված ժամկետից հետո նման պահանջ ներկայացվելու դեպքում վերջիններիս որպես կողմ ներգրավելու կամ մերժելու հարցը որոշում է Անձը:

Հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերության իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին, ուստի գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի շրջանակներում «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն Կարգի 15-րդ կետի համաձայն՝ ներգրավվել է որպես կողմ:

Հայտնում եմ, որ ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի քննության շրջանակներում 21.05.2021թ. ժամը 09:15-ին հրավիրվել է նիստ:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ մինչև հրավիրված նիստն անհրաժեշտ է տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1. արդյո՞ք «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից e-auction էլեկտրոնային աճուրդ համակարգի (հետայսու՝ Համակարգ) միջոցով Ընկերությանն ուղարկվել է հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում,
2. եթե այո, ապա ի՞նչ եղանակով է Ընկերությունը ստացել ծանուցումը և ի՞նչ ֆայլեր են կցվել նշված ծանուցմանը,
3. եթե Համակարգը հնարավորություն տալիս է տեսնելու, ապա ե՞րբ է Ընկերությունը դիտել ծանուցումը»:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 11.05.2021թ. միջանկյալ որոշման համաձայն՝ «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2021/105 ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգվել է 10 օրացույցային օրով և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանվել 21.05.2021թ. ներառյալ:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի կողմից սույն գործով որոշում կայացնելու օրվա դրությամբ՝ 21.05.2021թ., չեն ներկայացվել գործի քննության համար էական նշանակություն ունեցող տեղեկատվությունները, որպիսի

պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընթացակարգի շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Ընկերության պատշաճ ծանուցված լինելու փաստը, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.04.2021թ. թիվ 26/26-1/6118-2021 գրությամբ «Լայթ Էքսպերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**